



ՄԱՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՌԱ.ՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ (1908—1973)

Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, սեպտեմբերի 8-ին, Երևանի իր բնակարանում, ստեղծագործական իր ուժերի հատության շրջանում, 65 տարեկան հասակում, վախճանվեց ականավոր ճարտարապետ, պետական մրցանակի դափնելիքը և Մայր Աթոռին առջնաթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամ Ռաֆայել Սարգսի հսկայելյանը:

Հայ ճարտարապետությունը ծանր կորուս կրեց:

Մայր Աթոռու և անձամբ Հայոց Հայրապետը, որը մեծ բարեկամությամբ կապված էր տաղանդավոր ճարտարապետի հետ, հարազատորեն և հայրաքար բաժանեցին հայ ժողովրդի վիշտն ու հայ մշակույթի կրած մեծ կորուսով:


Տիւր է արձանագրել, որ հետապսու և Էջմիածնի Վեհարանում, Հայոց շինարար Հայրապետի կողքին, Մայր Աթոռին առքիքեր ճարտարապետական հանձնաժողովի անդամների շարքում, թափոր պիտի մաս մեծավաստակ արվեստագետի տեղը, տեղ, որը միա'յն ու միա'յն նրան էր պատկանում, որպես ուժեղ անհատականություն, մի բացառիկ ու ճշմարիտ արվեստագետ հոգի, հայունասեր միուր ու սիրու, որը որպես քաղաքացի հսկար էր իր ժողովրդի և երկրի պատմությամբ և հայ ժողովրդի ստեղծած արժեքներով:

Հանգույցալլ ծնվել է 1908 թվականին Թիֆլիսի քաղաքում, դարաբաղջի հայ մահկավարծների ընտանիքում: Խսրայելյանն իր միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսին և ապա ընդունվել տեղի գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետության ֆակուլտետուր:

Դեռևս ուսանողական հաստարանից նախորդում ու շերմ սեր է ցուցաբերել ճարտարապետության, գեղանկարչության ասպարեզներում:

Այնուհետև խոստումնալից պատահին, սպազա տաղանդավոր ճարտարապետն ու նկարիչը, իր ուսումն կատարելագործել է

Լենինգրադի ինժեներա-շինարարական ինստիտուտում և այն ավարտել՝ Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտում:



1936 թվականին ճարտարապետ-նկարիչ Խսրայելյանը տեղափոխվում է Երևան, որ հայրենի նողի վրա երիտասարդ արվեստագետի ստաց բացվում է խոստումնալից, ստեղծարար գործունեություն: Հանսպարհ, գործունեություն, որը հարաճուն թափով և միշտ վերընթաց թոփշբով շարունակվում է մինչև իր կյանքի վերջին օրերը:

Հայրենի նողի վրա, մայրաքաղաքում թե նայունական այլ քաղաքներում, ավանեն-

րում ու գյուղերում Ռ. Խորայելյանն իր ողջ գիտակցական կյանքը ու հարուստ գիտելիքները, իր կառուցղական շուայլ շնորհներու ու տալաները ի պատճ է դնում, առանց մնացորդի, իր վերածնված ժողովրդի հայրենական մշակույթի զարգացման ու հարստացման շնորհակագ գործին:

Խորայելյանն իր բացառիկ տաղանդի շնորհիւ իր ողջ կառուցղական արվեստի մեջ ստեղծագործարար կամքջում է հայ դասական ճարտարապետության ավանդույթներու ու արդիական՝ հարտացներով հայ մշակույթի գանձարանը վայ արտահայտված ազգային, ինքնատիպ արվեստի և վաճառությունը: Նա չէր սիրում ընթանալ կյանքում և արվեստի մեջ տրորված ճանապարհներով և չէր սիրում երբեք կրկնել ինքն իրեն:

Խորայելյանական ճարտարապետական ոճն իր մեջ կրում էր հայ ժողովրդի ազգային բնակչության բնորոշ գծերը՝ պարզություն, խստություն, ամրություն և լավագություն:

Այս ինաստով Խորայելյանի կառուցղները գոհիված մարտիկների հիշատակին կանգնեցված ծավալով փոքր, բայց արվեստով բարձր ու եզակի աղբյուր-հուշարձաններից մինչև քարե մեծ կոտավի գործերը, մինչև Սարդարապատի համաժողովրդական ճանապարհարանական աշխատամարտում տարված հայոցանակի պատվին կառուցղած հուշարձանը ստեղծագործական անկրկնելի մոնումենտալ արժեքներ են, քարեղեն երգ ու քերթված, հայրենական ճարտարապետության մեկ-մեկ «անողելի զանգակատուն»:

Մեպուեմբերի 13-ին ճարտարապետ Ռուֆայել Խորայելյանի անցուն ամփոփվում է Երևանի քաղաքային պանթեոնում:

Ճարտարապետ Ռ. Խորայելյանի անունը ուղիյա տառերով է գրված նաև S. S. Վազգեն Ա. Ամենայն Հայոց շինարար Հայրապետի գահակալության 17 տարիների շինարարական-վերանորոգչական գործունեության տարեգործության մեջ:

1956 թվականից սկսած, Հայոց Հայրապետի նախաձեռնությամբ Մայր Աթոռին առջնաթեր կազմված հայրենի ճարտարապետների հանձնաժողովի ամենաեռահոգուն և գործունյա անդամներից մեկն էր Ռ. Խորայելյանը, որն իր մյուս անվանի ճարտարապետ ընկերների հետ միասին ինքնարուին նվիրումով և հայ մարդու մեծ սիրով ու սրտով իր վրա էր վերցրել Մայր Աթոռի, վասիքների, եկեղեցիների վերանորոգչական և, ընդհանրապես, շինարարական մեծ ձեռնարկների վերին ղեկավարությունը՝ մարմին տալու Հայոց շինարար Հայրապետի կառուցղական ծրագրերին:

Բազում ու բազմապիսի են Հայոց Հայրապետի անմիջական թելադրությամբ և համաձայնությամբ ճարտարապետ Ռ. Խորայելյանի նախագծերով կատարված շինարարական, վերանորոգչական աշխատանքները թե՛ Մայր Աթոռում և թե՛ նրա շրջանակից դուրս:

Ռ. Խորայելյանի նախագծերով են կատարվել ի մասնավորի՝

1. Ս. Էջմիածնի Մայր տաճարի Ավագ և Խման և սեղանները.

2. Մայրավանքի շրջափակում, տաճարի հյուսիսային կողմում՝ «աղոթքի և ուխտի» նահատակաց հուշարձանը.

3. Մայրավանքի արևելյան դարպասի մոտ՝ Կաթոնարդյուր-հուշարձանը.

4. Արագածի լանջին, Բյուրականում հայրապետական «Հայկաշեն» ամառանոցը.

5. Երևանում՝ ս. Սարգիս առաջնորդականության եկեղեցու վերակառուցման նախագիծը.

6. Երևանում, պատմական Կոնդի թաղամասում և. Հովհաննես եկեղեցու վերակառուցման նախագիծը, որի վրա երիտասարդական թափով ու սիրով աշխատում էր մինչև իսկ իր մահվան անկողնու մեջ, ինչպես խոստովանել էր Հայոց Հայրապետին. իր մահից չորս օր առաջ նրա այցելության ժամանակ, որպեսզի հայոց նոր մայրաքաղաքում էլ վարդապուլի սրանչելի նորակառուցներին. համահնչուն վեր խոյանան մեր եկեղեցական ճարտարապետությունը հատկանշող հայկական գլուխքները ու զանգականությունը, որպես երկիվանան անրադարապետական համանվագի անրածանելի մի մասը:

Մեպուեմբերի 16-ին, կիրակի օրը, Խաչվերացի տոնին, Մայր տաճարում, և պատարագի հետո, Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստական հանդիսավոր արարողություն, որին ներկա են լինում հանգույցայի հարազաները, քարեկամները, աշխատանքային ընկերները և մեծ թվով մտավորականներ:

Հայոց Հայրապետը «Ուղիղ եղիցին աղօյք մեր, որպէս խոնկ առաջի քո» բնարանով իր սրտառու դամբանականում վեր է հանում հայ ճարտարապետության կրած մեծ կորուստը՝ Ռ. Խորայելյանի անհինարինելի մահով, և ապա հանգամանորեն նրան բնութագրում որպէս տաղանդավոր ճարտարապետ-քանդակագործ, որն իր ստեղծագործություններում հիանալիորեն միահյուսում է անցյալի ու ներկան, որպէս իրավ հայ արվեստագետ, որն իր բազում շնորհներով ու իրագործուներով իր անունն ու կյանքը անմոռանալիորեն կապել է նաև 1957—1973 թվականների ընթացքում, իր

գահակալության օրերին և Էջմիածնի շինարարական-վերանորոգչական մեծ աշխատանքներին: Հայոց Հայրապետն օրինում է բարի անունն ու շնորհակալ վաստակը մեծանուն Վարպետաց Վարպետի:

Անունեան Մայր տաճարի կամարների ներքո հնչում են հոգեզմայլ «Յորժամ»-ը և Լուսինե Զարարյանի սքանչելի կատարումը և Ալ Հարությունյանի «Գրա, Տէր»-ը:

Հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է հանգույցայի հարազատներին, բարեկամներին, ընկերներին ու միմիթարության հայրական խոսքով սփոփում բոլորի վիշտն ու տրտմությունը:

Ծարտարապետ Ռ. Խորայելյանի հիշատակը ոգեկոչելով, միմիթարության խոսքեր

են ասում Մայր Արտոնին առջևիթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամներ պրոֆ. Վարագդատ Հարությունյանը, Ակարիչ Գրիգոր Խանջյանը և «Էջմիածն» ամսագրի խմբագիր Արթուր Հատիւյանը:

Վերջում հանգույցայի 93-ամյա ծերունազարդ ու վաստակավոր մանկավարժ հայրը՝ Սարգիս Խորայելյանը, հանուն իր և իր գերդաստանի, Հայոց Հայրապետին ուղյալ երախտագիտության և շնորհակալության շերմ խոսք է ասում՝ շեշտելով, որ իրենց ընտանեկան վիշտը մեղմանում և սփոփում է Հայոց Հայրապետի միմիթարության այսքան շերմ ու սրտառուչ խոսքով և աղոթք-Երով:

Հանգիստ ողբացյալ ճարտարապետ Ռ. Խորայելյանի ուկորներին:

